ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թ. հունվարի 23-ին, N 25-Ա գ. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՆՏԱՌՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՒՐԻԿ ՇՄԱՎՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասով, 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ հոդվածով, 226-րդ հոդվածով, 227-րդ հոդվածով, 228-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների կողմից 2023 թ. հունվարի 5-ին ՀՀ Արագածոտնի մարզի «Անտառուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ Դպրոց) այցելելու արդյունքում կազմված արձանագրությունն այն մասին, որ Դպրոցում աշխատանքային ժամին որևէ գործընթաց չի իրականացվել՝ աշխատողների բացակայության պատճառով, ինչպես նաև հաշվի առնելով Դպրոցի տնօրեն Ս. Շմավոնյանի (այսուհետ՝ Տնօրեն) ներկայացրած բացատրագիրը և այն, որ հայտնաբերված փաստով առկա է Տնօրենի մեղքը՝ ուսումնական հաստատությունում աշխատողների կողմից ներքին կարգապահական կանոնների և աշխատանքային ռեժիմի պահպանման նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու հարցում, ուստի

որոշում եմ

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Անտառուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Սուրիկ Շմավոնյանին հայտարարել նկատողություն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու հիմքով:
2. Սույն որոշման մասին տեղեկացնել Ս. Շմավոնյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Ս. Շմավոնյանին ծանուցման օրվան հաջորդող օրվանից:
4. Որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 1/23/2024 14:10:28 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ